Այդ դէպքերի ընթացքին էր, որ Պարսկաստանից նահանջող Կուբանեան 2րդ դիվիզիան — 2 գնացքով, ձիաւորներով ու թնդանօթներով — կուռով եկել-հասել էր Սաղարակ, ուր և շրջապատւել էր թուրքերի և քրդերի կողմից, որոնք մի վերջնագրով պահանջ էին ներկայացրել, որ կազակները յանձնեն իրենց զէնքերն ու ձիերը և այնպէս հեռանան: Կազակները մերժել էին և կռւում էին նրանց դէմ:

Թնդանօթների ու գնդացիրների ձայնը առնելով՝ Կուռо Թարխանեանը դուրս եկաւ հետախուզութեան և փողի հնչիւններով ու համազարկներով նշաններ էր անում: Երեկոյեան դէմ, թշնամու շղթան ճեղքելով, Արարատ կայարանը հասաւ մի զրահապատ ինքնաշարժ՝ մի սպայով և գնդացիրներով ու ռումբերով զինուած 6 կազակներով: Ռուս զօրքերի հրամանատարը մի նամակով առաջարկում էր յաջորդ օրը միասին յարձակում գործել թշնամու վրա:

Միւս օր առաւօտեան ժամը 7-ին, գնդ. Տէր-Սարգսեանի հրամանով, 2 վաշտ ու ձիաւոր հարիւրեակը շարժւեցին դէպի Սաղարակ: Սկսւեց կատաղի կռիւ: Քրդերն ու թուրքերը պաշտպանւում էին ճակատից ու թիկունքից, բայց երկու կրակի մէջ առնւած՝ չդիմացան ու փախան՝ մի մասը Դարալագեազի ուղղութեամբ, միւսը՝ Արաքսի միւս ափը: Կէսօրւայ մօտ հայ և ռուս զօրամասերը «կեցցէ»-ներով միացան իրար: Գրոհի ժամանակ երկու ոտքից վիրաւորւեց հարիւրեակի հրամանատար Թարխանեանը: Դաւալուի ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն արաւ կազակներին, որոնք հայերին տուին մի քանի վագոն հաց, դարի, ռազմամթերք:

Յաջորդ օր, Դաւալուի բնակչութիւնը և հայկական զօրամասերը կազակների հետ միասին մեկնեցին դէպի Երևան:

Ղամարլուի և Դաւալուի շրջանի դէպքերի առթիւ Երեւանից Թիֆլիս ուղարկւեցին բազմաթիւ հեռագիրներ. մահմետականները մեղադրում էին հայերին, հայերը՝ մահմետականներին: Հայերի կողմից հետևեալ ձևով էր ներկայացւում կացութիւնը:

Փետր. 21-ին Երեւանի զօրքերի հրամանատար գնդ. Փիրումեանը հեռագրեց ներքին գործերի նախարարին. «Մահմետականների անընդհատ յարձակումները զինւորական, մարդատար, բեռնակիր և սանիտարական գնացքների վրա չեն դադարում՝ չնայած ձեռք առնւած միջոցների: Աւազակային յարձակումները մեծ չափերով տեղի են ունենում երկաթուղու, խճուղու, հեռագրային գծերի վրա, կայարանները կողոպտւել են, կամուրջները՝ քանդւել, որի պատճառով կտրւած ենք ամբողջ աշխարհից. առանձնապէս ահաբեկւած է ռուս ազգաբնակութիւնը, որը թողնելով ամէն բան՝ հեռանում է Կովկասի սահմաններից: Թուրքերը յարձակւել են Ղամարլուի վրա, ուղարկւեց պատգամաւորութիւն, որը ենթարկւելով հրացանաձգութեան՝ յետ դարձաւ: Թուրքերը իրենց ուժերը կենտրոնացրել են Ուլուխանլու և Աղհամզալու կայարաններում, ուր և զինաթափ են անում զինւորական գնացքները: Երեւանի նահանգային կոմիսարիատը ստիպւած էր զինւած ուժերով վերականգնել կարգը նաև հեռագրային և երկաթուղային գծերի վրա: 48 ժամ ժամանակ է տրւած կապ հաստատելու համար Դաւալու կայարանի հետ, որտեղ գտնւում է մի զօրամաս. այս պահանջս չկատարելու